ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՈՐՈՇՈՒՄ N 161

ք. Երևան 10.02.2025թ.

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության (ՀՎՀՀ 05028672, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Աշտարակ, Երևանյան /Շ/ 85/3) միջև 11.04.2024թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-24-10/7-10 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը 2024թ. 2-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ քան 28.06.2024թ.-ը պետք է մատակարարեր 500 հատ «Պրոֆիլներ (ձևեր) Պրոֆիլ F47», 300 հատ «Պրոֆիլներ (ձևեր) Պրոֆիլ U21» և 100 հատ «Փականներ՝ ըստ գործառույթների Փական ՊՊՌ Փ-20 ամերիկանկա» որոնց մասով Պայմանագրով նախատեսված պայմաններին համապատասխան «ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 500 հատ «Պրոֆիլներ(ձևեր) Պրոֆիլ F47», 300 հատ «Պրոֆիլներ (ձևեր) Պրոֆիլ U21» և 60 հատ «Փականներ՝ ըստ գործառույթների Փական ՊՊՌ Փ-20 ամերիկանկա» ապրանքների մատակարարում չի իրականացվել:

Հաշվի առնելով, որ «ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությունը՝ որոշում եմ՝ «ՊՐՈՖԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ